Հավելված N 1
ՀՀ կառավարության 2017 թ.
սեպտեմբերի 28-ի նիստի N 41
արձանագրային որոշման

ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ

1. Զբաղվածության կարգավորման ամենամյա պետական ծրագրի (այսուհետ՝ ամենամյա ծրագիր) մշակման և իրականացման ուղենիշային համարվող օրենսդրական հիմքը Հայաստանի Հանրապետության զբաղվածության 2013-2018 թվականների ռազմավարությունն է (այսուհետ՝ զբաղվածության ռազմավարություն) և «Զբաղվածության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը (այսուհետ՝ օրենք):

2. Ծրագրի մշակման ընթացքում հաշվի են առնվել Հայաստանի Հանրապետության 2014-2025 թվականների հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիրը (այսուհետ՝ հեռանկարային զարգացման ծրագիր), որի հիմքում դրված չորս գերակայություններից որպես առաջին մատնանշվում է զբաղվածության ընդլայնումը, ՀՀ վարչապետի 2016 թվականի դեկտեմբերի 29-ի N 1256-Ա որոշման պահանջները, Հայաստանի Հանրապետության կառավարության 2018-2020 թվականների միջնաժամկետ ծախսային ծրագրով նախատեսված գերակայությունները, ինչպես նաև «Աշխատաշուկայի հետազոտման աշխատանքների կազմակերպում» ծրագրի շրջանակում 2017 թվականին իրականացված «Հայաստանի Հանրապետության աշխատաշուկայի առաջարկի և պահանջարկի վերլուծություն և գնահատում» թեմայով հետազոտության (այսուհետ՝ հետազոտություն) արդյունքներով արված առաջարկությունները:

3. Զբաղվածության պետական քաղաքականությունը մշակում է Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմինը և իրականացնում ամենամյա ծրագրի միջոցով՝ համագործակցելով պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, սոցիալական գործընկերների, գործատուների, աշխատանքի տեղավորման ոչ պետական կազմակերպությունների, շահագրգիռ այլ կազմակերպությունների և ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող անձանց հետ:

4. Ամենամյա ծրագրի նպատակը բնակչության կայուն և արդյունավետ զբաղվածության ապահովման համար պայմանների ստեղծումն է: Այն ուղղված է աշխատաշուկայի լարվածությունը մեղմելուն, զբաղվածության ակտիվ ծրագրերի միջոցով աշխատաշուկայում անմրցունակ անձանց՝ ըստ առաջնահերթությունների կայուն զբաղվածության ապահովմանը և ինքնազբաղվածության խթանմանը, աշխատանք փնտրողների, հատկապես՝ հաշմանդամություն ունեցող անձանց, երիտասարդների զբաղվածության մակարդակի բարձրացմանը, կայուն զբաղվածություն ապահովող պետական ծրագրերին գործատուների շահագրգիռ ներգրավվածությունը խթանելուն, գործատուների կողմից ներկայացված թափուր աշխատատեղերը որակյալ մասնագետներով համալրելուն, ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրման շրջանակներում աշխատաշուկայում անմրցունակ խմբերի արդյունավետ և կայուն զբաղվածության ապահովմանը:

5. Զբաղվածության ոլորտի հիմնական ցուցանիշների վերլուծության հիմքում դրվել են զբաղվածության հետևյալ ցուցանիշների՝ տնտեսական ակտիվության մակարդակի, զբաղվածության մակարդակի, գործազրկության մակարդակի և ոչ ֆորմալ զբաղվածության մակարդակի ցուցանիշների փոխադարձ կապի և այդ ցուցանիշների վրա մակրոտնտեսական ցուցանիշների՝ համախառն ներքին արդյունքի ծավալի (ՀՆԱ) փոփոխության ազդեցությունների վերլուծությունը: Տեղեկատվության հավաքագրման համար հիմք են հանդիսացել ՀՀ ազգային վիճակագրական ծառայության կողմից հրապարակված 2011-2016թթ. ցուցանիշները:

6. Տնտեսական ակտիվության ցուցանիշը 2016թ. դեկտեմբերին 2015թ. դեկտեմբերի համեմատ կազմել է 100.4%, 2016թ. նոյեմբերի համեմատ՝ 117.4%, իսկ 2016թ. հունվար-դեկտեմբերը (աճողական) 2015թ. հունվար-դեկտեմբերի համեմատ՝ 100.7%: 2017թ. հունվարի տնտեսական ակտիվության ցուցանիշը 2016թ. հունվարի համեմատ կազմել է 106.8%:

2017 թվականի հունվար-հուլիսին տնտեսական ակտիվության (ՏԱՑ)[1] աճի տեմպն արագացել է: ՏԱՑ-ը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ իրական արտահայտությամբ աճել է 6.3%-ով, որը գերազանցում է նախորդ տարվա ցուցանիշը 0.2 տոկոսային կետով: Տնտեսական ակտիվությանը նպաստել են ծառայությունների (4.3 տոկոսային կետ), արդյունաբերության (2.4 տոկոսային կետ) և առևտրի (1.2 տոկոսային կետ)[2] ճյուղերի համախառն թողարկումների իրական աճերը:

7. Մակրոմակարդակում զբաղվածության ոլորտի զարգացումների վերլուծության նպատակով զբաղվածության հիմնական ցուցանիշները համադրվել են տնտեսական աճը բնութագրող ցուցանիշի հետ և դիտարկվել են դրանց փոխառնչությունները (Գծապատկերների խումբ 1):

Գծապատկեր 1. Զբաղվածության հիմնական ցուցանիշները և տնտեսական աճը
Գծապատկեր 1.1. Զբաղվածության մակարդակը և տնտեսական աճը

---

[1]2011 թվականից ՀՀ Ազգային վիճակագրական ծառայությունը ամսական ՀՆԱ-ից անցում է կատարել ՏԱՑ-ի հաշվարկմանը: Ի տարբերություն Ազգային հաշիվների մեթոդաբանությամբ հաշվարկվող ՀՆԱ ցուցանիշի (որն ունի եռամսյակային և տարեկան պարբերականություն) ամսական ՏԱՑ-ը բնութագրում է տնտեսությունում ապրանքների և ծառայությունների թողարկման ծավալների փոփոխությունը, այլ ոչ թե ավելացված արժեքի փոփոխությունը: Բացի այդ, ամսական ՏԱՑ-ը չի ընդգրկում արտադրանքի զուտ հարկերը և ֆինանսական միջնորդության անուղղակիորեն չափվող ծառայությունները (ՖՄԱՉԾ), որոնք ներառվում են եռամսյակային և տարեկան ՀՆԱ-ի արտադրական եղանակով հաշվարկներում:

[2]ՏԱՑ-ի աճին ճյուղերի նպաստումները ՀՀ ֆինանսների նախարարության գնահատականներն են:



8. Գծապատկեր 1.1.-ը վկայում է, որ ՀՆԱ-ի փոփոխությունները էապես կորելացված են զբաղվածության մակարդակի հետ և արձանագրվել է զբաղվածության մակարդակի ու ՀՆԱ աճի տեմպի նվազման օրինաչափություն:

Գծապատկեր 1.2. Գործազրկության մակարդակը և տնտեսական աճը



Գծապատկեր 1.2-ը նույնպես վկայում է, որ ՀՆԱ-ի փոփոխությունները էապես կորելացված են գործազրկության մակարդակի հետ:

Գործազրկության մակարդակը 2011 և 2015թթ. ունեցել է միջինը՝ 17.6% արժեք, արձանագրելով 2015թ.-ին ամենաբարձր՝ 18.5%, իսկ 2013թ.- ին ամենացածր՝ 16.2% արդյունքները: Գործազրկության մակարդակը 2015թ.-ի համեմատ 2016թ.-ին նվազել է 0.5%-ային կետով՝ կազմելով 18.0%: Այդուհանդերձ, չնայած որ ՀՀ-ում

արձանագրվել է տնտեսական ակտիվության մակարդակի աճ, զբաղվածության մակարդակը կրճատվել է նախորդ տարվա համեմատ՝ կազմելով 50.0%:

9. Վերը ներկայացված մակրոտնտեսական ցուցանիշները ուղղակիորեն փոխկապակցված են, ուստի աշխատաշուկայի վերլուծության և զբաղվածության պետական ծրագրերի պլանավորման ժամանակ կարևոր է դիտարկել մակրոտնտեսական ցուցանիշների, մասնավորապես ՀՆԱ-ի և տնտեսական ակտիվության ազդեցությունը զբաղվածության ցուցանիշների վրա: Փոխադարձ ազդեցությունները դիտարկվել են կախվածության գծային մոտարկմամբ, որը նաև հնարավորություն է տալիս կատարել որոշակի կարճաժամկետ կանխատեսումներ և հասկանալ ոլորտում առկա խնդիրները:

10.Գծապատկեր 2-ում ներկայացված է Հայաստանի Հանրապետության աշխատաշուկան բնութագրող աշխատանքային ռեսուրսների, տնտեսապես ակտիվ բնակչության, զբաղվածների և գործազուրկների թվաքանակի շարժը 2012-2016թթ.-ին:

Գծապատկեր 2. Աշխատանքային ռեսուրսների, տնտեսապես ակտիվ բնակչության, զբաղվածների և գործազուրկների թվաքանակը, հազար մարդ

Գծապատկեր 2.1 Աշխատանքային ռեսուրսների և տնտեսապես ակտիվ բնակչության թվաքանակը, հազար մարդ



Գծապատկեր 2.1 Զբաղվածների և գործազուրկների թվաքանակը, հազար մարդ



11. Ըստ ԱՎԾ կողմից իրականացված տնային տնտեսությունների (SS) աշխատուժի ընտրանքային հետազոտության, աշխատանքային ռեսուրսների ծավալը 2012-2016թթ.-ին դրսևորել է նվազման միտում: 2016թ.-ին 2015թ.-ի հետ համեմատած աշխատանքային ռեսուրսների թիվը նվազել է մոտ 4.2%-ով՝ կազմելով վերջին 5 տարիների ընթացքում արձանագրված ամենացածր ցուցանիշը՝ 2011.4 հազար մարդ:

2016թ. նվազել են ինչպես զբաղվածների, այնպես էլ գործազուկների թիվը: Այսպես, 2016թ.-ին 2015թ.-ի համեմատ զբաղվածների թիվը նվազել է 6.2%-ով՝ կազմելով 1006.2 հազար մարդ, իսկ գործազուրկների թիվը նվազել է 9.6%-ով՝ կազմելով 220.2 հազար մարդ: Այս միտումները կարելի է բացատրել Հայաստանի Հանրապետությունից արտագնա աշխատանքի մեկնողների ավելացող տեմպերով, որոնք հիմնականում հանդիսանում են մեր երկրի տնտեսապես ակտիվ բնակչությունը:

Գծապատկեր 3. Երիտասարդների թիվը զբաղվածների թվաքանակում, հազար մարդ



12. Համաձայն ԱՎԾ-ի «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2017 թվականի հունվարին» զեկույցի տվյալների՝ 2016թ.-ին Հայաստանի Հանրապետությունում աշխատուժի առաջարկի 77%-ը կազմել են 30 և ավելի տարիք ունեցող անձինք, իսկ 16-29 տարեկանների մասնաբաժինը աշխատուժի ընդհանուր առաջարկի մեջ կազմել է 23%:

Զբաղվածների ընդհանուր թվաքանակում մինչև 2015թ. երիտասարդների թվի տատանումները աննշան էին: 2016թ.-ին զբաղվածների մեջ երիտասարդների մասնաբաժինը նախորդ տարվա համեմատ նվազել է մոտ 16%-ով:

Գծապատկեր 4. Զբաղվածներն ըստ տնտեսական գործունեության տեսակների, հազար մարդ



13. Ինչպես ցույց են տալիս գծապատկեր 4-ի տվյալները, 2012թ.-ից սկսած զբաղվածների մեջ նվազման կայուն միտում ունեն գյուղատնտեսական աշխատանքներում զբաղվածները: 2012-2016թթ.-ի ընթացքում տարեկան նվազման միջին տեմպը կազմել է 6.17%: Անկման ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է 2016թ.-ին՝ 2015թ.-ի համեմատ կազմելով 10.8%: Արդյունաբերության մեջ մինչև 2015թ.-ը զբաղվածների ներգրավվածության միտումները գնալով նվազում են: 2012-2015թթ. նվազման տարեկան միջին տեմպը կազմել է 4.4%: Իսկ 2016թ.-ին արդյունաբերության մեջ զբաղվածներ թիվը ավելացել է 0.4%-ով՝ կազմելով 121.4 հազար մարդ: Զբաղվածների մեջ արդյունաբերության ոլորտում ներգրավվածների ամենացածր ցուցանիշը արձանագրվել է 2015թ.-ին՝ կազմելով 120.78 հազար մարդ: Նվազման միտում է դրսևորել նաև շինարարության մեջ զբաղված անձանց թիվը: 2016թ.-ին արձանագրվել է շինարարության մեջ զբաղվածների ամենացածր ցուցանիշը դիտարկվող ժամանակահատվածի համար՝ 37.5 հազար մարդ: Ընդ որում, նախորդ տարվա համեմատ այդ ցուցանիշը նվազել է մոտ 24.8%-ով: Զբաղվածների հիմնական մասնաբաժինը կենտրոնացած է ծառայությունների ոլորտում, որտեղ մինչև 2014թ. միտումը դրական էր: Ծառայության ոլորտում զբաղվածների ներգրավվածության աճի միջին տարեկան տեմպը 2% էր: Այդուհանդերձ, 2014 թվականից սկսած ցուցանիշը ունի նվազման միտում՝ տարեկան միջինը 3.7%-ով:

Գծապատկեր 5. Ոչ ֆորմալ զբաղվածության մակարդակը, %



14. Դիտարկվող ժամանակահատվածում ոչ ֆորմալ զբաղվածության մակարդակը ունեցել է միջինը 49.5% արդյունք, նվազման միտումը տարեկան կազմել է միջինը 0.7%: Սակայն, չնայած արձանագրված նվազման միտումներին, այս ցուցանիշը շարունակում է մնալ բավականին բարձր: Ընդ որում, ոչ գյուղատնտեսական ոլորտում ոչ ֆորմալ զբաղվածությունը դիտարկվող ժամանակահատվածում կազմել է 19.3%: Ըստ էության, զբաղվածներից

յուրաքանչյուր երեքից մեկը ոչ ֆորմալ զբաղված է, ինչը բնական է, որ ունենում է խիստ բացասական ազդեցություն ինչպես տնտեսության վրա ընդհանրապես, այնպես էլ աշխատաշուկայի ձևավորման և զբաղվածության ցուցանիշների վրա:

Դիտարկենք գործազուրկների ընդհանուր թվի բաշխումը ըստ սեռի և ըստ տարիքային խմբերի (աղյուսակ 6, 7):

Գծապատկեր 6. Գործազուրկների թիվն ըստ սեռի, հազար մարդ



15. Ինչպես ցույց է տալիս գծապատկեր 6-ը, դիտարկվող ողջ ժամանակահատվածի ընթացքում կանանց մասնաբաժինը գործազուրկների ընդհանուր թվի մեջ միշտ բարձր է եղել տղամարդկանցից: Գործազուրկ կանանց միջին թվաքանակը կազմել է գործազուրկների ընդհանուր թվաքանակի 53.1%-ը: Սկսած 2014թ.-ից գործազուրկ կանանց թիվը ունի նվազման միտում տարեկան միջինը մոտ 4%-ով: Միևնույն ժամանակ, 2015թ.-ի հետ համեմատած՝ 2016թ.-ին գործազուրկ տղամարդկանց թիվը նվազել է 2.9%-ով՝ կազմելով 116.9 հազար մարդ: Այս ամենը պայմանավորված է նրանով, որ վերջին տարիներին նվազման միտում ունի գործազուրկների ընդհանուր թվաքանակը:

Ընդհանուր առմամբ, 2016 թվականին 220.2 հազար գործազուրկների մեջ 53.1%-ը տղամարդիկ են, 46.9%-ը՝ կանայք:

Գծապատկեր 7. Գործազուրկների թիվն ըստ տարիքային խմբերի, հազար մարդ



16. Քանի որ 2016թ.-ին վերաբերող տվյալները դեռևս բացակայում են, դիտարկվող ժամանակահատվածը 2011-2015թթ. է: 2015թ.-ին գործազուրկների ընդհանուր թվաքանակի 37%-ը (90.3 հազար մարդ) կազմել են երիտասարդները (15-29 տաիքային խումբ): Այս ցուցանիշը 2011թ.-ի նկատմամբ նվազել է 4.6 տոկոսային կետով (2011թ.-ին երիտասարդները կազմել են գործազուրկների թվաքանակի 41.6%-ը կամ 110,6 հազար մարդ): 2015թ.-ին գործազուրկ երիտասարդների թվաքանակի մեջ հատկապես նվազել է 20-24 տարիքային խմբի գործազուրկների թվաքանակը (16.6%-ով՝ նախորդ տարվա նկատմամբ:)

Գծապատկեր 8. Գործազուրկների թիվն ըստ կրթական մակարդակի, հազար մարդ



17.Գործազրկության մակարդակն ըստ կրթական մակարդակի ներկայացված է գծապատկեր 8-ում (2016թ.-ին վերաբերվող տվյալների բացակայության պատճառով, դիտարկվող ժամանակահատվածը 2012-2015թթ. է): Գործազրկության մակարդակը 2012 թվականին բավական բարձր էր մասնագիտական, թերի բարձրագույն կրթություն ունեցողների շրջանում (18.4%), իսկ 2015 թվականին արդեն նույն ցուցանիշը կազմել է 22%: Բավական բարձր է նաև բարձրագույն, հետբուհական կրթություն ունեցողների գործազրկության մակարդակը, որը 2015 թվականին կազմել է 17.9%: Այդ նույն ժամանակաշրջանում գործազուրկների ընդհանուր թվաքանակում 2.4 տոկոսային կետով նվազել է հիմնական ընդհանուր կրթություն ունեցողների թիվը: 2011-2015թթ. համեմատաբար աճել է նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթություն ունեցողների թվաքանակը: 2015թ.-ին գործազուրկների ընդհանուր թվաքանակի 27.8%-ը ունեցել են բարձրագույն, հետբուհական կրթություն: Դիտարկվող ժամանակահատվածում 1.4 տոկոսային կետով նվազման միտում է դրսևորել միջին մասնագիտական և թերի բարձրագույն կրթություն ունեցողների տեսակարար կշիռը:

Գծապատկեր 9. Գործազուրկների թիվն ըստ աշխատանք փնտրելու տևողության, հազար մարդ



18. Ըստ Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի զբաղվածության պետական գործակալության (այսուհետ՝ Գործակալություն) տվյալների, 2016թ.-ին պաշտոնապես գրանցված գործազուրկների 7.1%-ն աշխատանքի է տեղավորվել շուրջ 3 ամսվա ընթացքում, 15.0%-ն աշխատանք է փնտրել 3-12 ամիս, 8,5%-ը՝ 1-2 տարի, 6.8%-ը՝ 2-4 տարի և 26.4%-ը՝ 4 և ավելի տարի: 2011թ.-ին այդ ցուցանիշները համապատասխանաբար կազմել են 13.8%, 33.1%, 20.0%, 14% և 18.2% (գծապատկեր 9): Շարադրվածից հետևում է, որ 2011-2015թթ.-ի ընթացքում շուրջ կրկնակի անգամ կրճատվել է աշխատանքի տեղավորվածների թիվը, որոնք աշխատանք են փնտրել մինչև 3 ամիս, 3-12 ամիս, 1-2 տարի, 2-4 տարի տևողությամբ: Միաժամանակ, 8.1%-ային կետով աճել է 4 և ավելի տարի աշխատանք փնտրողների թիվը: Վերջինս փաստում է մի շարք մասնագիտությունների գծով աշխատուժի պահանջարկի բացակայության, ինչպես նաև գործազուրկների՝ ստացած մասնագիտությամբ

աշխատելու ունակությունները և հմտությունները կորցնելու մասին: Հատկանշական է նաև այն, որ 2013 թվականի հետ համեմատած մոտ 2.5 անգամ ավելացել են 4 և ավել տարիների ընթացքում աշխատանքի տեղավորված գործազուրկների թիվը, ինչը փաստում է երկարատև գործազրկության առկայության մասին:

Գծապատկեր 10. Գործազուրկների թիվն ըստ աշխատանքային փորձի առկայության, հազար մարդ



19. 2011թ.-ին աշխատանքային փորձ ունեցող գործազուրկները կազմում էին գործազուրկների ընդհանուր թվաքանակի 61.3%-ը, 2012թ.-ին այդ ցուցանիշն աճել է 3.3 տոկոսային կետով, այնուհետև նվազել է մինչև 54.5%՝ 2014թ.-ին, 2015թ.-ին դարձյալ գրանցվել է ցուցանիշի աճ, կազմելով 64% (Գծապատկեր 10):

Գծապատկեր 11. Գործազրկության մակարդակի բաշխվածությունը՝ ըստ ՀՀ մարզերի



20. Հայաստանի Հանրապետության մարզերում գործազրկության մակարդակների համեմատական վերլուծության արդյունքները վկայում են մարզերի միջև գործազրկության մակարդակի զգալի տարբերությունների մասին: Հանրապետական միջին ցուցանիշից գործազրկության մակարդակը 2012-2016թթ.-ին բարձր է եղել Երևանում, Հայաստանի Հանրապետության Կոտայքի, Լոռու, Շիրակի, Սյունիքի, Տավուշի, Վայոց ձորի մարզերում: 2016թ.-ին նախորդ տարվա նկատմամբ գործազրկության մակարդակի աճ է գրանցվել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի (0.2 տոկոսային կետով), Արարատի (0.9 տոկոսային կետով), Արմավիրի (2.2 տոկոսային կետով), Շիրակի (2 տոկոսային կետով), Տավուշի (0.4 տոկոսային կետով) մարզերում (Գծապատկեր 11):

Գծապատկեր 12. Թափուր մեկ աշխատատեղի միջին տարեկան ծանրաբեռնվածությունը, մարդ



21. 2016թ.-ի հուլիսին թափուր մեկ աշխատատեղի ծանրաբեռնվածությունը կազմել է 46 մարդ, որը նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ աճել է 114%-ով (գծապատկեր 12): 2014 թվականին թափուր մեկ աշխատատեղի միջին տարեկան ծանրաբեռնվածությունն եղել է 35 մարդ, 2015թ.-ին այդ թիվը մի փոքր աճելով դարձել է 41 մարդ, իսկ 2016թ-ին՝ 46 մարդ: Ենթադրելի է, որ առկա է աշխատուժի առաջարկի աճ:

Գծապատկեր 13. Աշխատուժի միջին տարեկան պահանջարկը (մարդ)



Գծապատկեր 14. Աշխատուժի պահանջարկը ըստ տարիների և ամիսների (մարդ)



22. Աշխատուժի պահանջարկի վերաբերյալ վիճակագրական տվյալների վերլուծությունը բերված է գծապատկերներ 13-ում և 14-ում, համաձայն որոնց՝ 2014-2016թթ.-ին աշխատուժի միջին տարեկան պահանջարկը փոքր ինչ ավելացել է. 2015թ.-ին՝ 5.8%-ով, 2016 թ.-ին՝ 1.1%-ով:

23. Գործակալության գործունեության, այդ թվում՝ գործատուների հետ համագործակցությունը բնութագրող առանձին ցուցանիշներ ներկայացված են գծապատկեր 15-ում:

Գծապատկեր 15. Գործատուների և գործակալության համագործակցությունը բնութագրող ցուցանիշներ



24. Գծապատկեր 15-ից հետևում է, որ գործատուների կողմից ներկայացվող թափուր աշխատատեղերի միջին ամսական թիվը 2012-2016թթ. ընկած ժամանակահատվածում ամենացածր ցուցանիշ է գրանցել 2014թ.-ին (2007): Նշված ցուցանիշը 2014թ.-ին նախորդ տարվա նկատմամբ նվազել է 22%-ով, 2015-2016թթ. այդ ցուցանիշը դրսևորել է աճի միտում և 2016թ.-ին կազմել է 2778, նախորդ տարվա նկատմամբ աճելով 17.3%-ով: Դիտարկվող ժամանակահատվածում կայուն աճ է դրսևորել նաև Գործակալության միջնորդությամբ աշխատանքի տեղավորվածների թվաքանակը, բացառությամբ 2014թ.-ի (2014թ.-ին ցուցանիշը նախորդ տարվա նկատմամբ նվազել է 9.2%-ով): 2016թ.-ին Գործակալության միջնորդությամբ աշխատանքի տեղավորվածների թվաքանակը կազմել է 17513:

Գործակալություն ներկայացված չկրկնվող թափուր աշխատատեղերի թիվը 2011-2012թթ.-ին աճել է, այնուհետև սկսել է նվազել և 2015թ.-ին կազմել 7225, 2016թ.-ին՝ 7884:

25. 2016թ.-ի հուլիսի 1-ի դրությամբ զբաղվածության կարգավորման պետական ծրագրերում տարեսկզբից ընդգրկվել է 615 աշխատանք փնտրող անձ կամ աշխատանք փնտրողների 8.8%-ը:

Ըստ Գործակալության տվյալների՝ 2017թ.-ի օգոստոսի 1-ի դրությամբ՝

1) գործազուրկների թվաքանակը կազմել է 75452 մարդ,

2) գործազուրկների 4.3%-ը հաշմանդամություն ունեցող անձինք են,

3) տարեսկզբից աշխատանքի են տեղավորվել Գործակալությունում հաշվառված՝

ա. աշխատանք փնտրողների 5.3%-ը կամ 4767 մարդ,

բ. առաջին անգամ աշխատանք փնտրողների 5.2%-ը կամ 2006 մարդ,

4) Գործակալությունը տարեսկզբից համագործակցել է 17841 գործատուների հետ, որոնցից թափուր աշխատատեղերի հայտ է ներկայացրել 1964 գործատու, հավաքագրված չկրկնվող թափուր աշխատատեղերի թիվը կազմել է 5419, որից նոր ստեղծված աշխատատեղերի թիվը եղել է 193:

26. «Աշխատաշուկայի հետազոտման աշխատանքների կազմակերպում» ծրագրի շրջանակում 2017թ.-ին իրականացվել է «Հայաստանի Հանրապետության աշխատաշուկայի առաջարկի և պահանջարկի վերլուծություն և գնահատում» թեմայով հետազոտությունը, որի արդյունքներով կանխատեսվել է զբաղվածների և գործազուրկների թվաքանակը 2018թ.-ին:

Հաշվի առնելով իրականացված հետազոտության արդյունքները, ինչպես նաև ԱՎԾ վիճակագրական տվյալները նախորդ տարիների համար (2010-2016 թվականներ) գնահատվել է նոր ստեղծվող աշխատատեղերի ՀՆԱ-ի վրա ունեցած ազդեցությունը, միաժամանակ դիտարկվել է ժողովրդագրական կարևոր ցուցանիշի՝ բնակչության թվաքանակի փոփոխման հնարավոր ազդեցությունը զբաղվածության մակարդակի վրա:

Հիմք ընդունելով բնակչության թվաքանակի տարեկան 0.22% նվազման միտումը, զբաղվածների թվի կրճատման 2.28% միջին տեմպի կանխատեսվող վիճակագրական փոփոխությունը կամ տարեկան նվազումը և հետազոտության շրջանակներում գործատուների կողմից կատարված կանխատեսումները, համաձայն որոնց՝ 2017-2020թթ.-ին իրենց կազմակերպություններում աշխատողների թվաքանակը նշված ժամանակահատվածում կավելանա միջինը տարեկան 0.75%-ով, կարելի է եզրակացնել, որ՝

- 2010-2022թթ.-ին ՀՆԱ-ի աճի միջին տարեկան տեմպը կկազմի 4.1% (2010-2016թթ.-ին աճի միջին տարեկան տեմպը կազմել է 6.7%).
- ՀՆԱ-ի ծավալների միջին տարեկան աճի տեմպերը կնվազեն 2.6 տոկոսային կետով (ինչը պայմանավորված է բնակչության թվաքանակի, զբաղվածների թվաքանակի և հետազոտության արդյունքում գործատուների կողմից զբաղվածների թվաքանակի փոփոխման վերաբերյալ կատարված կանխատեսումներով). ՀՆԱ ծավալի միջին տարեկան աճի փաստացի տեմպերը 2010-2016 թթ.-ին կազմել է 6.7%, իսկ կանխատեսումների հիման վրա կատարված հաշվարկները ցույց են տալիս, որ 2017-2022թթ.-ին այն կարող է կազմել 4.1%: Փաստացի հաջորդ 6 տարիներին կարող է արձանագրվել նախորդ վեց տարիների համեմատ ՀՆԱ ծավալների աճի տեմպերի նվազում միջինը 2.6 տոկոսային կետով:
- 2010-2022թթ.-ին զբաղվածների թվաքանակը կնվազի տարեկան միջինը 2.56 տոկոսային կետով:

Զբաղվածների և գործազուրկների թվաքանակի կանխատեսման հիմքում դրված է գծային մոտարկման սկզբունքը, որի հիման վրա կատարված հաշվարկներով ներկայացվում է զբաղվածների և գործազուրկների թվաքանակի փոփոխությունը 2010-2020 թվականներին (փաստացի արժեք՝ 2010-2016 թվականներ և կանխատեսումներ՝ 2017-2020 թվականներ):

Գծապատկեր 16. Զբաղվածների և գործազուրկների թվաքանակի փոփոխությունը 2010-2020 թվականներին (փաստացի արժեք՝ 2010-2016 թվականներ և կանխատեսումներ 2017-2020 թվականներ)



Հետազոտության ընթացքում գործատուների կողմից ներկայացված նոր ստեղծվող և կրճատվող աշխատատեղերի, ինչպես նաև նրանց կողմից իրենց կազմակերպություններում աշխատողների թվաքանակի աճի և նվազման կանխատեսումների հիման վրա վերլուծվել է գործատուների մոտ աշխատատեղերի պահանջարկը 2017-2020թթ.-ին:

Համաձայն անցկացված հարցման, գործատուները ըստ տարիների ներկայացրել են աշխատատեղի պահանջարկ 2017թ.-ին՝ 1256 աշխատատեղ, 2018թ.-ին՝ 1315 աշխատատեղ, 2019թ.-ին՝ 861 աշխատատեղ և 2020թ.-ին՝ 815 աշխատատեղ:

Ներկայացված աշխատատեղերի բաշխումը ըստ մարզերի բերված է գծանկար 17-ում:

Գծապատկեր 17. Աշխատուժի պահանջարկի բաշխումը ըստ մարզերի, %.



Ինչպես երևում է գծանկար 17-ից, աշխատուժի հիմնական պահանջարկը արձանագրվել է Երևանում և Շիրակի մարզում, որոնց միասին բաժին է ընկնում աշխատուժի ընդհանուր պահանջարկի միջինը մոտ 80%-ը: Աշխատուժի պահանջարկի ամենացածր արդյունքը արձանագրվել է Արագածոտնի մարզում (0%, պահանջարկ չկա), ինչպես նաև Արարատի և Լոռու մարզերում: Մյուս մարզերում աշխատուժի պահանջարկը տատանվում է 8%-ից մինչև 15%:

27. Հաշվի առնելով ամենամյա ծրագրի 5-26-րդ կետերում բերված զբաղվածության իրավիճակային վերլուծության ամփոփ արդյունքները, ինչպես նաև հիմք ընդունելով հեռանկարային զարգացման ծրագրում և զբաղվածության ռազմավարության մեջ սահմանված նպատակներն ու թիրախները՝ 2018թ.-ի համար առանձնացվում են հետևյալ հիմնախնդիրները.

1) Հայաստանի աշխատաշուկայում առաջարկի և պահանջարկի քրոնիկ անհամապատասխանությունը, գործազրկության բարձր մակարդակը.

2) Աշխատաշուկայի տարածքային անհամամասնություններով պայմանավորված առանձին տարածաշրջաններում գործազրկության մակարդակների էական տարբերությունների առկայությունը.

3) Աշխատաշուկայում անմրցունակ անձանց զբաղվածության ապահովման դժվարությունները.

4) Կանանց շրջանում գործազրկության բարձր մակարդակը.

5) Առաջին անգամ աշխատաշուկա մուտք գործող երիտասարդների աշխատանքի տեղավորման հնարավորությունների ցածր մակարդակը.

6) Հայաստանում ոչ ֆորմալ զբաղվածության բարձր մակարդակը:

Վերը նշված հիմնախնդիրներով է պայմանավորված Հայաստանի աշխատանքի շուկայի կարևոր առանձնահատկությունը՝ աշխատանքային միգրացիայի բարձր ցուցանիշները:

28. Զբաղվածության պետական ծրագրերի իրականացման գործընթացում մասնագիտացված պետական կառույցներին ներգրավվելու, ինչպես նաև սահմանափակ ռեսուրսներով ավելի մեծ քանակությամբ շահառուների զբաղվածության ապահովման նպատակով, ՀՀ 2018-2020թթ. ՄԺԾ ծախսային ծրագրով զբաղվածության պետական ծրագրերի ծախսարդյունավետության տեսանկյունից, որպես առաջնահերթ իրականացման ծրագրեր առանձնացվել են հետևյալ 4-ը՝

1) աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքային ունակությունների և կարողությունների ձեռքբերման համար միանվագ փոխհատուցում գործատուին,

2) ձեռք բերած մասնագիտությամբ մասնագիտական աշխատանքային փորձ ձեռք բերելու համար գործազուրկներին աջակցության տրամադրում,

3) աշխատանքի տոնավաճառի կազմակերպում,

4) գործազուրկների և աշխատանքից ազատման ռիսկ ունեցող՝ աշխատանք փնտրող անձանց մասնագիտական ուսուցման կազմակերպում:

29. Ամենամյա ծրագրում ներառված են հետևյալ ծրագրերը և ծառայությունները.

1)Աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի տեղավորման դեպքում գործատուին միանվագ փոխհատուցման տրամադրման ծրագիր՝ աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքային ունակությունների և կարողությունների ձեռքբերման համար միանվագ փոխհատուցում գործատուին ենթածրագիր

ա. ենթածրագրի նպատակն աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքային ունակությունների և կարողությունների՝ աշխատանքի վայրում ձեռքբերման հնարավորությունների ընձեռման միջոցով կայուն զբաղվածության ապահովումն է,

բ. ենթածրագրի շահառուներն աշխատաշուկայում անմրցունակ անձինք են,

գ. աշխատանքի վայրում անմրցունակ անձի կողմից որոշակի աշխատանքային ունակությունների և կարողությունների ձեռքբերման համար գործատուին տրվում է միանվագ փոխհատուցում՝ 50-200 հազ. դրամի չափով: Միանվագ փոխհատուցման չափը տարբերակվում է ելնելով աշխատաշուկայում անմրցունակության որոշարկման չափանիշներից,

դ. ակնկալվում է, որ ենթածրագրում ընդգրկվածների առնվազն 10%-ը պետք է լինեն հաշմանդամություն ունեցող անձինք,

ե. ենթածրագրում ընդգրկված անձանց կայուն զբաղվածության միջին հանրապետական ցուցանիշը կկազմի 80%.

2) Ձեռք բերած մասնագիտությամբ մասնագիտական աշխատանքային փորձ ձեռք բերելու համար գործազուրկներին աջակցության տրամադրում

ա. ծրագրի նպատակը ձեռք բերած մասնագիտությամբ առաջին անգամ աշխատաշուկա մուտք գործող գործազուրկի՝ իր մասնագիտական որակավորմանը համապատասխան մասնագիտական աշխատանքային փորձ ձեռք բերելու, աշխատաշուկայում առավել մրցունակ դառնալու և հարմար աշխատանքի տեղավորվելու համար ցուցաբերվող աջակցության միջոցով կայուն զբաղվածության ապահովումն է,

բ. ծրագրի շահառուները գործազուրկներն են,

գ. ծրագրի իրականացման ամբողջ ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցներից գործազուրկին վճարվում է աշխատավարձ՝ «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածով սահմանված գումարի չափով, իսկ գործատուին տրամադրվում է գումար՝ գործազուրկի աշխատավարձից հաշվարկվող եկամտային հարկը և օրենքով սահմանված դեպքերում՝ նպատակային սոցիալական վճարը փոխհատուցելու համար,

դ. ծրագրի տևողությունը 3 ամիս է,

ե. ակնկալվում է, որ ծրագրում ընդգրկվածների առնվազն 20%-ը պետք է լինեն հաշմանդամություն ունեցող անձինք,

զ. ծրագրում ընդգրկված անձանց կայուն զբաղվածության միջին հանրապետական ցուցանիշը կկազմի 32%.

3) Գործազուրկների և աշխատանքից ազատման ռիսկ ունեցող աշխատանք փնտրող անձանց մասնագիտական ուսուցման կազմակերպում

ա. ծրագրի նպատակն աշխատաշուկայի պահանջներին համապատասխան մասնագետների պատրաստման և աշխատաշուկայում նրանց մրցունակության բարձրացման միջոցով կայուն զբաղվածության ապահովումն է,

բ. ծրագրի շահառուները գործազուրկներն են և աշխատանքից ազատման ռիսկ ունեցող աշխատանք փնտրող անձինք,

գ. մասնագիտական ուսուցման դասընթացներում ընդգրկված աշխատանք փնտրող անձին ուսուցման ամբողջ ընթացքում յուրաքանչյուր ամիս վճարվում է կրթաթոշակ,

դ. ակնկալվում է, որ ծրագրում ընդգրկվողների առնվազն 10%-ը պետք է լինեն հաշմանդամություն ունեցող անձինք,

ե. ծրագրում ընդգրկված անձանց կայուն զբաղվածության միջին հանրապետական ցուցանիշը կկազմի 25%.

4) Աշխատանքի փոնավաճառի կազմակերպում

ա. ծրագրի նպատակը գործատուի և աշխատանք փնտրողի անմիջական հաղորդակցման միջոցով, մի կողմից՝ աշխատանք փնտրողի կայուն զբաղվածության ապահովումն է, իսկ մյուս կողմից՝ գործատուի մոտ առկա թափուր աշխատատեղի արդյունավետ համալրման ապահովումը,

բ. ծրագրի շահառուներն են աշխատանք փնտրողները և գործատուները,

գ. ծրագիրը մեկօրյա միջոցառում է, որն իրականացվում է «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով ընտրված ծառայություններ մատուցող կազմակերպության միջոցով:

դ. ծրագրում ընդգրկված անձանց կայուն զբաղվածության միջին հանրապետական ցուցանիշը կկազմի 20%.

5) Գործազուրկին այլ վայրում աշխատանքի տեղավորման աջակցության տրամադրում

ա. Ծրագրի նպատակը աշխատուժի ներքին տեղաշարժի կարգավորման միջոցով Հայաստանի Հանրապետության մարզերում, մասնավորապես, գյուղական բնակավայրերում և սահմանամերձ տարածաշրջաններում շարունակաբար չլրացվող թափուր աշխատատեղերի համալրումն ու կայուն զբաղվածության ապահովումն է,

բ. ծրագրի շահառուներն են գործազուրկները, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձինք,

գ. ծրագրի շրջանակներում շահառուներին փոխհատուցվում են հետևյալ ծախսերը՝

- շահառուի և իր ընտանիքի անդամների տեղափոխման տրանսպորտային ծախսը,

- շահառուի և իր ընտանիքի անդամների անհրաժեշտ գույքի տեղափոխման տրանսպորտային ծախսը,

- մեկ տարվա ընթացքում 4 անգամ մշտական բնակավայր այցելելու համար տրանսպորտային ծախսը,

- միանվագ ֆինանսական աջակցություն՝ նվազագույն ամսական աշխատավարձի եռապատիկի չափով,

- ամսական գումար բնակարանային վարձի և կոմունալ ծախսերի համար՝ «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածով սահմանված նվազագույն ամսական աշխատավարձի չափով,

- աշխատավարձի հավելում՝ «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածով սահմանված նվազագույն ամսական աշխատավարձի 50%-ից մինչև կրկնապատիկի չափով, որը հաստատված է Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2014 թվականի հուլիսի 3-ի N 82-Ա/1 հրամանով,

ե. ծրագրի տևողությունը 2 տարի է:

Գործազուրկին այլ վայրում աշխատանքի տեղավորման աջակցության ծրամադրում ծրագրով 2018թ.-ին նոր ծրագիր չի նախատեսվում իրականացնել, սակայն 2016թ-ին սկսած և ծրագիրը շարունակող 22 շահառուի ֆինանսավորումն 2018թ. ապահովելու համար ամենամյա ծրագրում նախատեսվում է 11,220.0 հազ. դրամ անցողիկ գումար: Ծրագրի իրականացման կարգի համաձայն անցումային գումարները ձևավորվում են յուրաքանչյուր ամիս վճարվող կոմունալ ծախսերի (նվազագույն աշխատավարձի չափով՝ առավելագույնը 2 տարի) և մշտական բնակության վայր այցելելու համար.

6) Աշխատաշուկայում անմրցունակ և մասնագիտություն չունեցող երիտասարդ մայրերի համար գործատուի մոտ մասնագիտական ուսուցման կազմակերպում

ա. ծրագրի նպատակն աշխատաշուկայում անմրցունակ և մասնագիտություն չունեցող երիտասարդ մայրերի աշխատանքային ունակությունների ու կարողությունների՝ աշխատանքի վայրում ձեռքբերման հնարավորությունների ընձեռման միջոցով կայուն զբաղվածության ապահովումն է,

բ. ծրագրի շահառուներն աշխատաշուկայում անմրցունակ անձինք են,

գ. ծրագրի տևողությունը չի կարող գերազանցել վեց ամիսը,

դ. ծրագրում ընդգրկված անձանց՝ ուսուցման ամբողջ ժամանակահատվածի ընթացքում տրվում է կրթաթոշակ՝ «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածով սահմանված նվազագույն ամսական աշխատավարձի չափով՝ մասնագիտական ուսուցմանը մասնակցելու համար պահանջվող տրանսպորտային և այլ ծախսերը հոգալու, ինչպես նաև երեխաների խնամքը կազմակերպելու համար.

ե. ծրագրում ընդգրկված անձանց կայուն զբաղվածության միջին հանրապետական ցուցանիշը կկազմի 32%.

7) Երեխա ունեցող մինչև 24 տարեկան գործազուրկ կանանց բարձրագույն մասնագիտական կրթությանը նախապատրաստման աջակցության ծրագրում

ա. ծրագրի նպատակն առաջին երեխայի ծննդյան ժամանակ մոր միջին տարիքի աստիճանական նվազումն է, պարզ վերարտադրության խրախուսման միջոցով ընդլայնված վերարտադրության համար հիմքերի նախապատրաստումը և երեխաներ ունեցող՝ մինչև 24 տարեկան գործազուրկ կանանց աշխատաշուկայում մրցունակության բարձրացումն ու նրանց կայուն զբաղվածության ապահովումը,

բ. ծրագրի շահառուներն են մինչև 24 տարեկան (ներառյալ) գործազուրկ այն կանայք, որոնք ունեն առնվազն երկու երեխա, միջնակարգ կամ միջնակարգ մասնագիտական կրթություն և չեն սովորել բարձրագույն ուսումնական հաստատությունում,

գ. նախապատրաստական դասընթացներում ընդգրկված անձանց ուսուցման ամբողջ ժամանակահատվածի ընթացքում տրվում է կրթաթոշակ՝ «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածով սահմանված նվազագույն ամսական աշխատավարձի 50 տոկոսի չափով,

դ. կանխատեսվում է, որ ծրագրի շահառուների մոտ 70%-ը ծրագրի իրականացման արդյունքում կընդունվի բարձրագույն ուսումնական հաստատություն.

8) Մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվող անձանց՝ երեխայի մինչև երկու տարին լրանալը աշխատանքի վերադառնալու դեպքում, երեխայի խնամքն աշխատանքին զուգահեռ կազմակերպելու համար աջակցության ծրագրում

ա. ծրագրի նպատակը մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվող անձանց՝ երեխայի խնամքն աշխատանքին զուգահեռ կազմակերպելու և նրանց՝ աշխատաշուկա վերադառնալու հնարավորությունների մեծացման միջոցով, կայուն զբաղվածության ապահովումն է,

բ. ծրագրի շահառուներն են տարածքային կենտրոններում հաշվառված, մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվող անձինք, որոնք մինչև երեխայի երկու տարին լրանալը վերադառնում են աշխատանքի և ում ամսական միջին աշխատավարձը չի գերազանցում նվազագույն ամսական աշխատավարձի կրկնապատիկը,

գ. ծրագրի տևողությունը երկու տարի է,

դ. ծրագրում ընդգրկված անձանց կայուն զբաղվածության միջին հանրապետական ցուցանիշը կկազմի 90%.

9) Մասնագիտական կողմնորոշման, համակարգի մեթոդաբանության ապահովման և կադրերի վերապատրաստման ծառայություններ

ա. Ծրագրի նպատակը հանրակրթության ոլորտում, մասնագիտական ուսումնական հաստատություններում սովորողների մասնագիտական կողմնորոշման, անձի ինքնագնահատման, կարիերայի պլանավորման, ձեռներեցությամբ սեփական զբաղվածությունն ապահովելու և աշխատաշուկա մուտք գործելու համար հիմնական կարողությունների զարգացմանն ուղղված մեթոդաբանության, ինչպես նաև մասնագիտական կողմնորոշման համակարգի կադրերի վերապատրաստման, հանրային իրազեկման ապահովումն է,

բ. ծրագրի շահառուներն են Հայաստանի Հանրապետության հանրակրթական, մասնագիտական ուսումնական հաստատությունների, ինտեգրված սոցիալական ծառայությունների համապատասխան մասնագետները:

30. Գործակալությունը զբաղվածության պետական կարգավորման շրջանակներում տրամադրում է նաև հետևյալ հիմնական ծառայությունները՝

1) աշխատանք փնտրող անձին անհրաժեշտ տեղեկատվության ու խորհրդատվության տրամադրում և հաշվառում, կայուն զբաղվածության ապահովման նպատակով կարիքների գնահատում և անհատական ծրագրի կազմում,

2) գործատուներին անհրաժեշտ խորհրդատվության և տեղեկատվության տրամադրում,

3) գործատուներից թափուր աշխատատեղերի վերաբերյալ տեղեկատվության ստացում և հավաքագրում,

4) աշխատանք փնտրող անձանց մասնագիտական կողմնորոշման վերաբերյալ խորհրդատվության տրամադրում,

5) աշխատանք փնտրող անձանց աշխատանքի տեղավորման միջնորդություն,

6) աշխատանք փնտրող անձանց, թափուր աշխատատեղերի, գործակալության հետ համագործակցող գործատուների վերաբերյալ տեղեկատվական շտեմարանի վարում,

7) աշխատանքի տեղավորման ծառայություններ մատուցող ոչ պետական կազմակերպություններին անհրաժեշտ տեղեկատվության և մասնագիտական խորհրդատվության, ինչպես նաև մեթոդական աջակցության տրամադրում,

8) ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված, հատկապես՝ նպաստառու ընտանիքների գործունակ և աշխատանքային տարիքի հասած, գործազուրկ անդամների հետևողական ներգրավումը կայուն կամ ժամանակավոր զբաղվածություն ապահովող ծրագրերում,

9) զբաղվածության կարգավորման պետական ծրագրերի և ծառայությունների հանրային իրազեկում:

31. Հաշվի առնելով զբաղվածության և համախառն ներքին արդյունքի ցուցանիշների ընդհանուր դինամիկայի կանխատեսումները Հայաստանի Հանրապետությունում՝ սահմանվել են ամենամյա ծրագրի արդյունքային ցուցանիշների թիրախային արժեքները, մասնավորապես՝

1) ծրագրերում ներառված հաշմանդամություն ունեցող անձանց աշխատանքի տեղավորման աճ առնվազն 25%-ով՝ նախորդ տարվա համեմատ.

2) գործակալության տարածքային կենտրոններում հաշվառված երիտասարդների առնվազն 15%-ի աշխատանքի տեղավորում.

3) կայուն զբաղվածության միջին հանրապետական ցուցանիշի ապահովում՝ առնվազն 57.8% կամ զբաղվածության կարգավորման պետական ծրագրերի իրականացման արդյունքում առնվազն 5157 անձի կայուն զբաղվածության ապահովում.

4) գործատուներից ստացված և հավաքագրված չկրկնվող թափուր աշխատատեղերի թվի աճ առնվազն 5%-ով՝ նախորդ տարվա համեմատ.

5) գործակալության տարածքային կենտրոնների հետ համագործակցող գործատուների թվի աճ առնվազն 5%-ով՝ նախորդ տարվա համեմատ:

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2017 թ.
սեպտեմբերի 28-ի նիստի N 41
արձանագրային որոշման

Ց Ա Ն Կ

ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

NN ը/կ	Միջոցառման անվանումը	Ակնկալվող արդյունքները	Ֆինանսավորման աղբյուրը
1.	Աշխատանք փնտրող անձանց խորհրդատվության տրամադրում	Տարվա ընթացքում շուրջ 150000 աշխատանք փնտրող անձանց խորհրդատվության տրամադրում, զբաղվածության պետական գործակալությունում 25000 անձանց հաշվառում	ֆինանսավորում չի պահանջում
2.	Աշխատանք փնտրող անձանց աշխատանքի տեղավորման միջնորդություն (առանց զբաղվածության կարգավորման պետական ծրագրերում ընդգրկելու)	Շուրջ 5000 աշխատանք փնտրող անձանց աշխատանքի տեղավորման միջնորդություն	ֆինանսավորում չի պահանջում
3.	Զբաղվածության կարգավորման պետական ծրագրերի արդյունավետության մոնիթորինգ և գնահատում, տեղեկատվական բազաների տվյալների համադրում	Զբաղվածության կարգավորման պետական ծրագրերի նպատակայնության և հասցեականության բարձրացում, իրավիճակից բխող ճկուն ծրագրային փոփոխությունների ապահովում	ֆինանսավորում չի պահանջում
4.	Գործատուների հետ համագործակցություն	Տարեկան կտրվածքով շուրջ 8670 չկրկնվող թափուր աշխատատեղերի	ֆինանսավորում չի պահանջում

		վերաբերյալ գործատուներից ստացված կամ հավաքագրված տեղեկատվության ապահովում	
5.	Զբաղվածության կարգավորման պետական ծրագրերի հանրային իրազեկում	Յուրաքանչյուր ամիս և անհրաժեշտությունից ելնելով՝ համակարգում իրականացվող ծրագրերի վերաբերյալ տեղեկատվության տրամադրում շահագրգիռ անձանց և հասարակության ներկայացուցիչներին	ֆինանսավորում չի պահանջում
6.	Աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի տեղավորման դեպքում գործատուին միանվագ փոխհատուցման տրամադրում ա) Աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքային ունակությունների և կարողությունների ձեռքբերման համար միանվագ փոխհատուցում գործատուին	Աշխատաշուկայում անմրցունակ շուրջ 5000 անձանց աշխատանքի տեղավորման, աշխատանքի վայրում հմտություններն ու ունակությունները զարգացնելու համար գործատուին միանվագ փոխհատուցում: Ծրագրի կայուն զբաղվածության գործակիցը 80% է:	ՀՀ պետական բյուջե՝ 1,000,000.0 հազար դրամ
7.	Գործազուրկների և աշխատանքից ազատման ռիսկ ունեցող՝ աշխատանք փնտրող անձանց մասնագիտական ուսուցման կազմակերպում	800 շահառուի համար մասնագիտական ուսուցման դասընթացների կազմակերպման վճար: Ծրագրի կայուն զբաղվածության գործակիցը 25 % է:	ՀՀ պետական բյուջե՝ 73,000.0 հազար դրամ
8.	Գործազուրկների և աշխատանքից ազատման ռիսկ ունեցող՝ աշխատանք փնտրող անձանց կրթաթոշակի	800 գործազուրկների, աշխատանքից ազատման ռիսկ ունեցող աշխատանք փնտրող անձանց	ՀՀ պետական բյուջե՝ 66,000.0 հազար դրամ, միջազգային դոնոր կազմակերպությունների միջոցներ

	տրամադրում	մասնագիտական ուսուցման ընթացքում կրթաթոշակի վճարում:	
9.	Ձեռք բերած մասնագիտությամբ մասնագիտական աշխատանքային փորձ ձեռք բերելու համար գործազուրկներին աջակցության տրամադրում	Մասնագիտություն ունեցող, սակայն մասնագիտական աշխատանքային փորձ չունեցող 1500 գործազուրկների աշխատանքային պրակտիկայի կազմակերպում գործատուի մոտ: Ծրագրի կայուն զբաղվածության գործակիցը 32% է:	ՀՀ պետական բյուջե բյուջե՝ 350,566.7 հազար դրամ
10.	Աշխատանքի տոնավաճառի կազմակերպում	12 աշխատանքի տոնավաճառի կազմակերպում: Ծրագրի կայուն զբաղվածության գործակիցը 20 % է:	ՀՀ պետական բյուջե բյուջե՝ 8,400.0 հազար դրամ
11.	Գործազուրկին այլ վայրում աշխատանքի տեղավորմանն աջակցության տրամադրում	Այլ վայր աշխատանքի գործուղված 22 գործազուրկների, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձանց աջակցության տրամադրում (բնակարանային վարձի և կոմունալ ծախսերի համար վճարվող գումար):	ՀՀ պետական բյուջե բյուջե՝ 11,220.0 հազար դրամ
12.	Աշխատաշուկայում անմրցունակ և մասնագիտություն չունեցող երիտասարդ մայրերի համար գործատուի մոտ մասնագիտական ուսուցման կազմակերպում	100 շահառուի՝ գործատուի մոտ մասնագիտական ուսուցման կազմակերպման աջակցության տրամադրում: Ծրագրի կայուն զբաղվածության գործակիցը 32 % է:	ՀՀ պետական բյուջե բյուջե 72,404.3 հազար դրամ
13.	Երեխա ունեցող մինչև 24 տարեկան գործազուրկ	Երեխա ունեցող մինչև 24 տարեկան 50 շահառուի	ՀՀ պետական բյուջե բյուջե՝ 29,750.0 հազար

	կանանց բարձրագույն մասնագիտական կրթությանը նախապատրաստման աջակցության տրամադրում	աջակցության տրամադրում: ԲՈՒՀ ընդունված շահառուների թվաքանակը՝ 35	դրամ
14.	Մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվող անձանց՝ երեխայի մինչև երկու տարին լրանալը աշխատանքի վերադառնալու դեպքում, երեխայի խնամքն աշխատանքին զուգահեռ կազմակերպելու համար աջակցության տրամադրում	200 շահառուի՝ երեխայի խնամքն աշխատանքին զուգահեռ կազմակերպելու համար աջակցության տրամադրում: Ծրագրի կայուն զբաղվածության գործակիցը 90% է:	ՀՀ պետական բյուջե բյուջե՝ 121,000.0 հազար դրամ
15.	Մասնագիտական կողմնորոշման համակարգի մեթոդաբանության ապահովում և կադրերի վերապատրաստում	3 մեթոդաբանական ձեռնարկի մշակում, 300 շահառուի վերապատրաստում, հանրային իրազեկում	ՀՀ պետական բյուջե՝ 22,029.5 հազար դրամ